



ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ամանորի և Ս. Ծննդեան տօներուն առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ
եկեղեցւոյ Սրբոզան Գետերուն յղուած են հետեւալ շնորհաւորական հեռագիրները. —

Երուսաղէմ, 23 Դեկտեմբեր 1980

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղէէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Նոր Տարւոյ և Ս. Ծննդեան տօներու բարերաստիկ առիթներով, խոնարհաբար
կը ներկայացնենք Զերդ Սրբը Օծութեան մեր և Սրբոց Յակոբեանց Միաբանուա-
թեան սրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծմէ որ շնորհէ
Զեղ յաջողութիւններով լի երկար և առողջ կետնք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝
անսասանութիւն և բարգաւաճում:

Եղիշէ Արքեպո. Տէրժէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 23 Դեկտեմբեր 1980

Նորին Սրբութիւն

Յովհաննէս-Պողոս Բ. Պատ

Վատիկան

Ս. Ծննդեան և Նոր Տարւոյ բարերաստիկ առիթներով, յարգանօք կը ներկա-
յացնենք Զերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Զեղ
շարունակական առողջութիւն և Զեր մեծ եկեղեցին՝ բարգաւաճում, Թող Ամենա-
կարգն Աստուծմէ յաջողութեամբ պատկէ Զեր բարի ջանքերն ու ծրագիրները,

Եղիշէ Արքեպո. Տէրժէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 23 Դեկտեմբեր 1980

Ն. Ամենապատուաթիւն Պիմէն

Պատրիարք Համայն Ռուսիոյ

Մոսկով

Ս. Ծննդեան և Ամանորի առիթներով, կը ներկայացնենք Զեղ մեր եղբայրական
և ջերմ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Զերդ Սրբութեան առող-
ջութեան և բարգաւաճ դործունէութեան համար,

Եղիշէ Արքեպո. Տէրժէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի